

ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱՐՈՒԹԻՒՆ
 Պոլիտիկոսի համար
 Տարեկան 12 ծր.
 Վեցամսեայ 6 »
 Արևասահմանի համար
 Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Ամերիկայի համար
 Տարեկան 3 ծր.
 Վեցամսեայ 1.50 »
 ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ
 Իտալոնոցն սոցիալ առաջին
 րեսին համար 40 սակիով
 հ. իսկ վերջին երեսի համար
 20 սակիով հ. երեքին
 առաջին սակավերնու համար
 20 Օլլ գնդը կըլլայ :

ՇԱՐՇԱՐՇ

Նամակ եւ դրամ դրկիչ
 Խմբագրութեանս հասցիի
 —
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)
 Գրութիւնք եւ շնորհակալութիւնք
 Արևասահմանի ձեռքի
 (20 ՍԱՆԹԻՄ)
 Պոլիտիկոսի համար ձեռքի
 (15 ՍԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒՇԱՐՇԱՐԹ ՈՐԵՐԸ

Վառնայի համար ձեռքի 10 սակիով

Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր գործակալ

ՊՈԼԻԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԷ ԵՐԱՇ-
 ԽԱՒՈՐԵԱԼ ՍՕՅԻՍ ԲԱՂԱՔԱԿԻ ՎԻՃԱ-
 ԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆԷ .

Տոմսակ գնել փափագողները կրնան
 իրեն գիմել :

Զար-Պորիս փողոց Վառնա

Վառնա բնակող քանի մը հայ
 արհեստաւոր երիտասարդներ մե-
 ղի կը հարցնեն թէ ի՞նչ կերպով
 կրնան նիւթապէս աշակցել եւ-
 րոպայի հայ Ուսանող Միութեան
 կը խնդրենք Միութեան Լիազոր
 մարմինէն, որպէսզի իմքազրու-
 թեանս միջոցաւ պատասխանէ
 յիշեալ աղջիկ արհեստաւորներուն
 ցանկութեան :

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ. ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆԸ

Չորս հինգ տարիէ ի վեր ար-
 տասհմանի հայութիւնը աւելի
 լուրջ ու կարեւոր գործ մը չէ
 կատարած քան Ուսանողական
 Միութեան հիմնարկութիւնը :

Հայ ուժերու ամենէն կենսական
 ու ընդունակ տարրն է ուսանող-
 ղութիւնը որ տարիներէ ի վեր
 անորոշութեանց մէջ կը դիզե-
 րէր, նուիրուած միմիայն ու է
 մասնագիտութեան ուսումին, կամ
 ենթարկուած աշխարհաքաղաքա-
 ցիական հասանքներու վաղան-
 ցուկ գիտնողութեան : Զուտ ազգա-
 յին շարժման ու յաւաքգիմու-
 թեան գործը եւրոպայի հայ ու-
 սանողութեան համար կարեւոր
 նշանակութիւն մը ունեցած չէ և
 ժամանակակից հայ պատմութեան
 մէջ, անիկա ու է տեղ չէ կըր-
 ցած գրաւել : Բարիչը, որ փոր-
 ձեց տեղական ընկերութիւն մը
 կազմել հայ ուսանողներու, այն
 աստիճան խնդ ու ուղորմելի մի-
 ջադէպեր ունեցաւ որ, վերջա-
 պէս առանց գործ մը տեսնելու
 ստիպուեցաւ ձայնը քաշել տխուր
 եսութիւններու զոհ երթալով :

Բարեբախտաբար, ճիշդ ժա-
 մանակին, Զուրցերիոյ և Գեր-
 մանիոյ ուսանողներու նախա-
 ձեռնութեամբ կազմուեցաւ եւ-
 րոպայի Հայ Ուսանողական Միու-
 թիւնը, որ կոչուած է նշանակե-
 լի դեր մը կատարելու մեր ներ-
 կայ վիճակին մէջ, և որ, ինչպէս
 իր ջանքերէն կերեւայ, լիովին
 ըմբռնած է իր կոչումին բոլոր
 մեծութիւնը :

Ի՞նչ կրնայ ընել ուսանողու-
 թիւնը հայկական դատին ի
 նպաստ :

Ուսանողութիւնը, մեր յեղա-
 փոխութեան տեսակէտով, միայն
 անհատական ուժեր կը ծնի,
 բայց հաւաքական ուժ մը չի կըր-
 նար արտադրել, և մենք իրմէն
 այդ տեսակ գործ մը չենք կըր-
 նար սպասել : Բայց ինք ոչ նուազ
 կարեւոր դեր մը ունի լրացնե-
 լու : այն է եւրոպական հասար-
 կութեան ծանօթացնել հայը, ոչ
 իր պատմութեան տխուր էջերով
 ինչպէս ըրած են շատեր, այլ իր
 իսկական արժանիքով, յարուցա-
 նել եւրոպայի հասարակական
 կարծիքը հայերուն հանդէպ հա-
 մակրութեամբ մը և զայն միշտ
 տրամադիր պահել յուղուելու,
 երբ ազգը պէտք ունի անոր :

Ատոր համար, ամենէն առաջ
 պէտք է ձեռք առնել օտար ու-
 սանողութիւնը : Մենք ամէն օր
 կը կարգանք թէ՛ եւրոպական
 այլ եւ այլ երկիրներու մէջ օ-
 տար ուսանողութիւնը ինչ ահա-
 գին շարժումներու ծնունդ կու-
 տայ և որքա՞ն լայն հոսանքներ
 յառաջ կրնայ բերել : Օտար ու-
 սանողութեան համակրութիւնը,
 ուրեմն, պղտիկ հաւաստիք մը չէ
 հայ Ուսանող Միութեան նպա-
 տակին յաջողութեան համար, և
 պէտք է ամէն կերպով աշխատի
 անոր համակրութիւնը վաստակելու,
 մեր ազգը անոր ծանօթացնելով
 և մեր աղէտներէն աւելի, անոնց
 մեր հպուստիւտ հերոսներուն
 կեանքերն ու գործերը ճանչ-
 ցընելով որոնց, պատմութիւնը ա-
 ւելի կողմերէ օտար ուսանողու-
 թիւնը, աւելի կը սիրցնէ զմեզ,
 իրական արժանիքի մը բոլոր
 պարտադրելի սիրով, քան հա-

րիւր աղետներու պիտոզորմ նկա-
 րագրութիւնը, որ վաղանցուկ
 ուղորմութեան տպաւորութիւնը
 միայն կը թողու, խղճմանքի
 յորդումներէն ազդուած :

Եւրոպայի Ուսանող Միու-
 թիւնը այս ուղղութեամբ կարեւոր
 քայլեր առած է արդէն : Ինչպէս
 նախորդ թուին մէջ հրատարակ-
 ուած շրջաբերականէն կը յայտ-
 նուէր, Միութիւնը ճոխ գումար-
 ներ արամագրած է եւրոպական
 հասարակութեան մէջ հայկական
 փրօփականտան արժարժեւու հա-
 մար : Ժողովածուներ, գրքոյկներ
 հրատարակել եւրոպական լեզու-
 ներով, քօնֆերանսներ կազմել,
 հայկական դատին ի նպաստ
 աշխատող օտարազգիներուն նիւ-
 թապէս ու բարոյապէս աշակցել
 և անոնց կարելի եղածին շափ
 առաւ միջոցներ տալ աւե-
 լի ձեռնհասօրէն իրենց առաջադ-
 րած գործը վարելու համար : ա-
 հա գովելի աշխատութիւններ
 որոնք ամէն հայու կողմէ համակ-
 րութեամբ պիտի ընդունուին :

Եւրոպայի Ուսանող Միութիւնը
 իր այս գործերով կուգայ նաեւ
 բառնալ մեղադրանք մը, որ
 այնքան անիրաւութեամբ ու ան-
 իրըզօրէն ուղեցին բաղրել հայ
 յեղափոխութեան վրայ :

Ամէն հայ գիտէ որ, գտնուեցան
 նոյնիսկ ինքզինքնին յեղափոխա-
 կան կոչող մարդիկ ու թերթեր
 որոնք պահանջեցին յեղափո-
 խութեան որ իր ժամանակակից
 անցնէ երկրէն դուրս, օտար մի-
 ջախոյրներու մէջ, հայնապատ
 փրօփական ընելով, առարկելով
 թէ առանց անոր հայկական դա-
 տը մեռել տաւ կը մնայ : Թող
 հիմայ ատոնք տեսնեն թէ՛ որու
 գործն է եղեր կատարել այդ
 փրօփականտը, որուն կարեւո-
 րութիւնը ի հարկէ ոչ ոք կրնայ
 ուրանալ : Յեղափոխութիւնը իր
 անմիջական նպատակէն չէր կըր-
 նար շեղիլ, առանց իր գոյու-
 թիւնը վրայ առլու : հակառակ
 պարագային արդէն կը դադարէր
 յեղափոխական մարմին ըլլալէ :
 Բայց, բնական է որ, կաշակ-
 ցէր ու կը նպաստէր այդ պարա-
 քը իր վրայ ստանձնող մարմին-

ներուն որոնք յեղափոխութեան
 անուղղակի օժանդակները կրնան
 համարուիլ :

Մենք պիտի ցանկանք որ ամէն
 ճշմարիտ հայ կապուի Ուսանող
 Միութեան հետ, ինչպէս կապ-
 ուած է իր յեղափոխութեան և
 աշակցի անոր ինչ միջոցով որ
 կրնայ : Երեսակ ժողովուրդէն
 մեկնող ձեռքը Ուսան Միութեան
 համար անփոխարինելի քաջալե-
 րութիւն մըն է, որ աւելի ետանդ
 ու խրախոս պիտի ներշնչէ ա-
 նոնց իրենց ստանձնած գործին
 մէջ :

ՇԱՀԱՊ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՕՅԻՆ. 9 Յօլիս

Երէկ քաղաքիս մէջ կատար-
 ուեցաւ տեղւոյս երկսեռ վարժա-
 րանի տարեկան վիճակացոյցնե-
 րու բաշխման հանդէսը, նախա-
 գահութեամբ Այց. հովիին ու
 խառն բազմութեան մը ներկա-
 յութեամբ :

Թղթակցի մը վայել անկողմ-
 նակալութեամբ պէտք է խոստո-
 վանիլ թէ հանդէսը շատ կոկիկ
 և սիրուն էր, ու տղայոց արտա-
 սանութիւնները երգերն ու զա-
 ւեշտախառն տրամախօսութիւն-
 ները շատ լաւ տպաւորութիւն
 ըրին ներկաներուն վրայ : Օր-
 ֆօնչէկիւլեան խօսեցաւ իրական
 սեռի դաստիարակութեան վրայ
 ու թաղականները աւաջնորդոյն
 ալ տեղեկագիրը կարգաց, ինչպէս
 նաեւ տղայոց վիճակացոյցներն
 ու քննիչներու վկայութիւնները
 որոնցմէ կը յայտնուի թէ տղայք
 այս տարի նախորդ տարիներէն
 շատ լաւ ու յաջողակ են, ան-
 շուշտ Օր. Խօնչէկիւլեանի ջան-
 քերուն շնորհիւ :

Այս տարի գոնէ վարժարանով
 միութարուեցանք բայց, յառաջի-
 կային կարծեմ ատկէց ալ պիտի
 զրկուինք, վասն զի արդի թա-
 ղականներու զեղծ ու ապիկա-
 պաշտօնավարութեան շնորհիւ,
 տեղւոյս Ազգ. գործերը այն սա-
 տիճան խառնակ կացութեան մը
 մատնուած են, որ բոլոր պաշ-

տօնեաները հրաժարելու ստիպուեցան եւ ոմանք ալ իրենց պահանջներուն գանձման համար կառավարութեան դիմեցին: Բայց քանի մը օրէ ի վեր թաղականները չեն երեւիր:

Մենք կը կարծէինք, որ այդ մարդիկը միայն թատրոնի 350 ֆրանքը կը լլած են, մինչդեռ ուրիշ շատ մը զեղծումներ կան, որոնք նոր երեւան կելլեն:

Անցեալ օր հանգանակութեան պատրուակով Բիւսթէնտիլ գացին ատենապետն ու ատենադպիրը, կարծես հոս թերի թողածնին կատարելագործելու տենչով: Հոն զազրելի խայտառակութիւններ ըրած են եւ մինչեւ իսկ իրենց տուներուն համար զնած սալորի օղին, իրենց կերած ու խմածին հետ, իբր ճանապարհածախս ազգին հաշույն անցուցած են, մօտ 100 ֆր. ծախս մը: որուն փոխարէն հաւաքած են միայն 10 ֆրանք:

Ականջը խօսի ձեր դրացի թերթի թղթակցին, որ առանց զգալու թէ՛ ինչ հակասութեան մէջ կ'ընայ, անցեալ օր իր մէկ թղթակցութեան մէջ, գրից թէ՛ «թաղականի մը կեանքը ու իր բարոյականի մասին գրուածները հանրային բնոյթ չունին»: հետեւաբար շարժէր պատասխանելու: Արդեօք չի մտածե՞ց թէ՛ թաղական մըն ալ հանրային պաշտօնեայ կը համարուի ու իր բարոյականը մեծ նշանակութիւն ունի:

Արդէն այդ պատճառաւ Օտեանի պէս մեծ մարդիկ սահմանադրութեան օրէնքները գրծած ատենին, մասնաւոր յօդադրածներով, արգելեցին այդ պիտները հանրային գործեր վարելէ: Թղթակցի մը պարտքն է անկողմնակալ ըլլար ու ճշմարտութիւնը չի ծածկել: Մինչեւ ցարդ եթէ

Պ. Թղթակցը փոխանակ չաքարի գործարանին ու թրանզէյէ հաշիւները հրատարակելու, թաղականներուն մէջ անցած գարձածները անաչառութեամբ հարգողա՞ծ ըլլար, ժողովուրդէ ալ դարման մը կը խորհէր ու տեղի չէր տար որ կառավարութիւնը օտարազգութիւններ ընէ, վասն զի հիմա կառավարութիւնը կը պընդէ թէ՛ այլ եւս հպատակ չեղող ու որոշ գիրք մը չունեցողները թաղական կամ հոգաբարձու չի պիտի ընտրուին: Եւ այս ամենուն գէ՞մ գիտէ՞ք Այց. հովիւը ինչ կ'ընէ կը յօրանչէ:

ԻՐԱՋԷԿ

ՃԱՄԲՈՒ ՆՈՐԵՐ

Գ

Չորս տարի վերջ կը վերադառնամ Ռուսչուք. այս չորս տարուան մէջ բաւական բարեփոխուած է քաղաքը, նոր երկաթուղին զինքը կը կապէ Պուլխարիոյ կեդրոնին հետ, փողոցները աւելի կոկոռած են եւ հետզհետէ նոր շէնքեր կառուցուած են հոն:

Տիրոջ անտեսական տագնապը սակայն հոս ալ ցնցած է առեւտրական հրապարակը, որուն հետեւանքը կրած են նաեւ հայերը. քանի մը տուներ բոլորովին սնանկացած եւ քանին որ ալ իրենց գործունէութեանց շրջանակները եղած են:

Բայց թողունք առեւտրական աշխարհը որուն անկեղծօրէն խոստովանելով շատ ալ խելքս չի հասնիր, զանք Ռուսչուքի հայոց բարոյական վիճակին:

Գծարդարար այս ալ միտթարական եւ յուսպտու ոչինչ ունի:

Վարժարանը իր շէնքովը թէեւ նոր եւ յարմար բայց կրթական տեսակետով շատ յետադէմ վիճակի մէջ է եղիր, ինչպէս կը յայտնեն գրիթէ բոլոր ծանօթներս:

Ամէն մարդ պզգանքով կը յիշէ այն տխրահոյակ անօրէնը որ երկու

տարի առաջ պաշտօնավարեց հոս, եւ իր բիրտ վարմունքովը եւ շնական կեանքովը ժամանակին բաւական աղմկեց հրապարակը ու դատարանները, եւ որուն արատաւոր կեանքին հետեւանքները դեռ կը քայկատուին դատարաններու առջեւ, մշտականա՞մօթ եւ արատ պատճառելով հայութեան պատուոյն եւ ռուսացական վարկին:

Գծարդտութիւնը հոն է սակայն որ թաղ. խորհուրդը, տնօրէնը ճամբելէ յետոյ, վարժարանը յանձնած է մեծ մասամբ անոր ձեռնասուն մանկաւարկներու, որոնք հանրային վատահոլութիւնը վայելելէ շատ հետո պատճառ դարձած են որ ծնողքները հետզհետէ անհին իրենց զաւակները ազգային վարժարանէն եւ զրկեն օտար դպրոցներ:

Այսքան աղէտներ չի ցնցեցին զմեզ, եւ դեռ կը շարունակենք օտաջնորդուիլ անձնական նկատումներէ ու կիրքէ, եւ մեր ներկան թունաւորելէ յետոյ, ամբողջովին կը վտանգենք նաեւ մեր ապագան ալ: Ամսոյս 8 ին, կիրակի օր, կէս օրէ վերջ, ներկայ գտնուեցայ մանչելու վարժարանին տարեկան մրցանակաբաշխութեան հանդէսին:

Ներկայ էին երկու քահանաներ, թաղ խորհուրդ, հոգաբարձութիւն, ռուսացիներ, ռուսանոցներ եւ 20 ի մօտ երկու սեռէ հանդիսականներ: Հանդէսը որ չի կազմակերպուած եւ տխուր բան մըն էր, շատ գէշ սպաւորութիւն թողուց:

Հոգաբարձութեան անդամներէն մէկը բացատրութիւններ տուաւ, վարժարանին նիւթական մատակարարութեան մասին:

Յետոյ ռուսացիներէն մէկն ալ իր չի հակեցած ու նոյնիսկ արտասանելու անկարող կարգ մը բաներ ծամծմելէ յետոյ մանրամասն տեղեկութիւն տուաւ վարժարանին ուսումնական մատակարարութեան մասին:

Գովելի գրծ ըրած պիտի ըլլային եթէ իրենց այդ վիճակագրութիւններն ու տեղեկութիւնները հաղորդէին տեղական ազգային մամուլին: Նոյն օրը կէս օրէ առաջ ալ աղջկանց վարժարանի մրցակաբաշխութեան հանդէսը կատարուեց է, որուն

ներկայ չի կրցի գտնուիլ, ըսողներ կան որ աղջկանց վարժարանը այս տարի աւելի բարեկարգ վիճակի մէջ կը գտնուէր քան մանչերու վարժարանը:

Գարձեալ կըսուի թէ ռուսացական խումբը աչ ստարի պիտի հրաժարեցուի ամբողջովին: Բայց լոկ հրաժարեցումով մը խնդիրը չի վերջանար ամենէն զժուարը ընտրութեանց մէջ յաջողելէ: Նոյնիսկ ներկայ ռուսացիներուն մէջ զիտեմ մէկը. Պօլսոյ կեդրոնական վարժարանի ընթացաւարտ մը, որ իր առած դաստիարակութեամբ եւ ամփացած հմտութիւնովը շատ օգտակար կրնայ ըլլալ: Եթէ երբեք լաւ ընկերներու հետ ըլլայ:

Ամէն պարագայի մէջ Ռուսչուքի թաղ. խորհուրդին վրայ անագին պատասխանատուութիւն կը ծանրանայ: Մեր այս նեղ անտեսական պայմաններուն մէջ աւելի պէտք ունինք իրարու մօտիկնալու եւ մեր նիւթական օժանդակութեան չի զրկելու վարժարանը, եւ ասոր համար պէտք է որոշ չափով գոհողութիւններ եւ զիջողութիւններ ընենք:

Ամէնէն մեծ անբարոյականութիւնն է ազգային պաշտօնները կիրարկել անձնական հաշիւներու, ինչպէս նաեւ աններելի ոճիր է թաղ. խորհրդոյ կամ հոգաբարձութեան դէմ քէմ պահելով կոնակ դարձնել ազգային վարժարանին:

Ընթերցարանը որ վարժարանէն վերջը Ռուսչուքի մատակարարական երկրորդ վարժարան էր, եւ չորս տարի առաջ կեդրոնավայր էր նորաստաւ երիտասարդութեան, այսօր բոլորովին երեւի վրայ մնացած է: Արդէն բաւական բան գրուած է անոր մասին, աւելի չեմ ուզեր երկարել, միայն սա չի մոռնամ յիշեցնելու ոյ, եթէ աւելի մեծերը, հայրերը մեղաւոր են վարժարանին համար, հոս երիտասարդութիւնը յանցաւոր է, եւ անոնք որ ժամանակին գորկուրանք մը ունէին այդ հաստատութեան վրայ, ոչ մէկ բանով չեն կըրնար արդարանալ իրենց ներկայ անսարքութեան մէջ, կրնան իրաւացի գանգասներ ունենալ ներկայ

Բ Ա Ն Ա Ս Ի Բ Ա Վ Ա Ն

Ի. Վ Ա Ջ Ո Վ

ՈՋ ԿՐ ԽՂ ՃԱՆ, ՈՋ ԿՐ ՍԻՒՆ

X

(Շար. Ասիտոյ) քիւնն)

Քիչ մը ժամանակ յետոյ, նա զատի վեր արահետ մը բռնեց որ բարձր ասի հողարլրակին վրայ հազիւ կը նշմարուէր, ուր կէտափ փողոցի աղքատիկ տնակները կը ցցուէին, վերէն շուն մը զայն տեսաւ, ու հաջել սկսաւ, մօտակայ տուներու բոլոր տունները անոր պատասխանեցին: Ափի մը գագաթը հասնելով բակ մը մտաւ, որ Դանուբի կողմէն պատ չունէր, եւ միայն տախտակէ սօֆա մը կը տեսնուէր հոն: Մաքէտօնսքին արագութեամբ բակէն անցնելով,

զգուշութեամբ դռնակ մը զարկաւ: Ներսէն ոտքի ձայն մը լսուեցաւ:

— Ո՞վ ես հարցուց կնկան մը ձայնը:

— Տղադ է, պատասխանեց Մաքէտօնսքին բերանը ծակին մօտեցնելով: աւելցուց Մաքէտօնսքին:

Դուրը ճապ եւ պտուա թօնքան ելաւ:

— Սարկաւազը հո՞ս է:

Փոխանակ պատասխանի, պառաւ թօնքան հարցուց:

— Ո՞ւր կ'ից կուգաս:

— Պրախլայէն:

— Բեզ կըսպասէ, — եւ անոր առջեւէն քալեց:

Լուցկին վտակով ճրագ մը սենեակը լուսաւորեց, որուն մէջ Մաքէտօնսքին տաք օդին ախորժութիւնը զգաց:

Հոն մէկը չըկար:

Ճրագը ձեռին Մաքէտօնսքին ալ անոր հետեւելով:

Միջանցքի մէջ տախտակամածին վրայ քառակուսի բացուած ծակի մը առջեւն էին, որ զօգուելուն պէս յայտնի չէր ըլլար որ հոն ծակ կայ, որովհետեւ կափարիչի տեղ ծառայող տախտակը քամուածի տեսք ունէր (որովհետեւ միայն կիսակտրուած գամերու գլուխներով էր) եւ տեղէն չեղբարալու համար, վերէն կոփելուն պէս, երկաթէ պատեակներով պնդուած էր եւ վարպետութեամբ գոցուած:

Մաքէտօնսքին նեղ երկրայարկ սանդուխէն ալ պառաւին հետեւեցաւ: Վարէն դուռ մը բացուեցաւ եւ լայն սենեկի մը մէջ մտան, կապերտներով լաւ մը զարդարուած եւ լուսաւորուած էր:

Իրասեղանի մը վրայ, թուղթեր, գրքեր, լրագիրներ, կնքամտ եւ ուրիշ իրեր, դիզուած էին խոռնիխոռն Լէվսկին նստած կը գրէր իր մտքով մտաշտակը կոնակը առած:

Աս զետնայարկ սենեակը աշխատութեան գրասենեակն էր, բոլոր

տաղքեալներուն եւ գործիչներուն, որոնք գաղտնի պառաւ թօնքայի մօտ կը գիշերէին:

Միւսնոյն ժամանակ զինարան ալ էր:

Լէվսկին քննող ակնարկ մը նետելով Մաքէտօնսքին վրայ առանց տեղէն ելլալու անոր ձեռքը սեղմեց եւ զլուխովը շարժում մը ըրաւ:

Մաքէտօնսքին կարմիր կոպերտով ծածկուած բազմոցին վրայ նստեցաւ: Նշմարեցի՞նք, Լէվսկին ատջին խօսքը եղաւ:

— Ոչ ոք:

— Լաւ:

Մաքէտօնսքին ծոցէն նամակ մը հանեց եւ անոր յանձնեց:

Առաքեալը ճրագը իրեն քաշելով ուշադրութեամբ սկսաւ նամակը կարդալ:

Իսկ այս միջոցին, վերը հիւրասէր պառաւը, զարակէն վար սուս գոց աման մը, կրակը խոռնեց եւ կերակուրը տաքնալու դրաւ: Պրայիլայի հայրուկներու պատգամաւորին համար:

վարչութեան ղեկ. բայց իրենց քա-
շուելովը եւ հրաժարելովը չէ՞ որ նո-
րեկը աւելի պիտի ուժովնայ եւ օր
մը բոլորովին պիտի ոչընչանայ այս
հաստատութիւնը :

Միթէ արդէն ենթարկուեցանք օ-
տարացումի անողոք հարկին . եւ ի-
րօք բնական եւ աշխարհագրական
օրէնքներով Ռուսներէ հայութիւնը
առաջին զոհը պիտի ըլլայ այդ այլա-
սերումին որ Ռուսականին վրայէն
կը յատկանայ ղեկի Պուլկարիս :

Վերը յիշատակած հաստատու-
թիւններէն զատ Ռուսներու նաեւ
Աղքատախնամ մարմինը մը . թէեւ ա-
նոր ղեկ ալ գանգատներ կան , բայց
անոր մօտերու հրապարակ հանած
հաշուեկէտը աչքէ անցնելով շատ
միտիմարական կը գտնուի : 8—10
ամսուան մէջ , Աղքատախնամը յա-
ջողած է 1700 ֆրանքի մօտ հասոյթ
ուենելու եւ այդ դրամը ամբողջովին
գործածած է իր նպատակին :

Աղքատախնամին ներկայ վար-
չութիւնը կը ջանայ նաեւ հին վար-
չութեան հաշիւներն ալ քննել , կըս-
ուի թէ բաւական պահանջներ կան
ատարանոր մօտ տոկոսի դրուած : Չենք
գիտեր թէ ո՞րչափ ստոյգ է այս լուրը
բայց եթէ իրաւ է , անկարելի պիտի
ըլլայ ըմբռնել թէ՛ ինչ մտքով Աղ-
քատախնամ մը այսպիսի տարիներու
մէջ դրամ կաւելցնէ եւ տոկոսի կու-
տայ : մինչդեռ աղքատութիւնը , պէտ-
քը այնչափ շատ է որ , խիստ խղճմտօ-
րէն պործել եւ ուրիշէն տոկոսով դրամ
առնել հարկ կըլլայ :

Իսկ ինչ որ չի հասկցուելէ աւելի
ծիծաղելի է , թաղ . խորհրդոյ պահած
լուծութիւնն է իրեն եղած հրապարա-
կաւ հարցումի մը մասին թէ աղ-
զին ունեցած 4—5000 ֆր . ի պահես-
տի գումարը ո՞րու մօտ կը գտնուի :
Իերնէ բերան կը պտտի թէ՛ այդ գու-
մարը սնանկացած հայու մը քով կը
գտնուի , որ ժամանակին քաղաքին
թաղ . խորհուրդի անգամներէն էր .
բանակամ մըն ալ կը հաւատտէ թէ
ինք ստոյգ աղքատի տեղակացած է
որ այդ գումարը ապահով տեղ մը
կը գտնուի :

Ինչ որ ալ եղած ըլլայ , թաղ .
խորհուրդը պարտաւոր է պաշտօնակէս

այդ հարցումին պատասխանը տալ ,
եւ իր պահած լուծութեամբ ամենուն
արգահատելի չի գտնուի :

Անշուշտ ընթերցողը կըսպասէ որ
քանի մը խօսք այ տեղս կազմուած
Միտքեան յանձնախումբի մասին
խօսիմ . որուն շրջաբերականը հրա-
տարակուեցաւ վերջերս :

Ես ալ հետքերի եղայ . բաւական
հարցափորձեր րրի թէ ո՞վ են , եւ
ի՞նչ կերպով պիտի աշխատին գործել
այդ գովելի գաղափարը իրազօրծելու
համար : Մէկը կըլէ նազարեկեաններ
են , միւսը՝ չէ Մարտականներ են ,
ուրիշները՝ չէ չէ զօքներ են : Վերջա-
պէս հաստատուեցաւ որ քանի մը
ղպորչականներ են , որ այդ շարադ-
րութիւնը հրապարակ հանած են :

Անշուշտ գովելի է Միտքեան հա-
մար եղած ամէն աշխատութիւն եւ
ջանք . դժբաղդարար մինչեւ այսօր
լոկ տեսական աշխատութիւն մը
արուած է եւ գործնական քայլ մը
առնուած չէ եւ անոնք որ այդ անու-
նով հրապարակ ելած են , ամէն ճիգ
թափած են որ Միտքեանը սնկարելի
ըլլայ : Եւ փոխանակ կուսակցութիւն-
ներու մէջ եղած անջրպիտը լեցնելու ,
անմեծանալի խրատատի մը փոխած
են զանի :

Արտաքին ո եւ է ճնշում կարելի
չէ որ յեղափոխականները իրարու
մօտեցնէ , խօսքս զուտ անկեղծ յեղա-
փոխականներու վրայ է :

Ժողովուրդ , ժողովուրդ կըսեն , կը
մտնան սակայն որ յեղափոխականն
ալ ժողովուրդ է եւ ժողովուրդի աւե-
նէն ազնիւ գաւակը , եւ եթէ երբէք
արտասահման հայութիւնը աշխար-
հագրելու ըլլանք , պիտի տեսնենք որ
յեղափոխականները հոն աւելի
ստուար գանգուած մը կը կազմեն ,
քան յեղովները , պահպանողական-
ները , աշխատեցողները , քրիստոնե-
րը , բաղնիսեղիները եւ Դիւ ու դիւ
ձակեր եւ անձանց որ աւանակները ա-
ռանձին առնելով :

Մեր յեղափոխական կուսակցու-
թիւնները չի միանան այն ստան ,
երբ իրենք բարեհաճութիւնը կուեն-
նան միտքիս առաջ բերելու ,
որովհետեւ քաղաքակ միտքիւն մը
երբէք տնհրաժեշտ չէ :

գամ չէր որ Պալքանի ժառերը կը
թնդային () :

() Պ. Պ. Պ. իր նամակներէն մէկին
մէջ կէզքիին համար , որուն հետ
Պուլքանի ծայրերը , ամայի ջաղացքի
մը մէջ պատասխարան գտած էր , հե-
տեւեալը կը գրէ . « Բարեկամս կէզք-
կին , անսովոր նկարագիր մը ունի :
Երբոր ծանր ճգնաժամերու մէջ կը
գտնուինք այնպէս ուրախ կըլլայ
ինչպէս ամենալաւ գրութեան մէջ ,
Երբտէն քարերն ու ծառերը կը
ճաթին , երկու երեք օր է որ սոված
ենք , ան միշտ զուարթ զուարթ կերպէ :
Գիշերը պառկելու ժամանակնիս կեր-
գէ , սոտուեն աչքերը բանտուեն պէս
գարձեալ կերպէ : Որչափ որ յուսահա-
տութեան մէջ ըլլան , ան քիզ կը
զուարճացնէ եւ յու բոլոր նեղու-
թիւնները ու կակիծները մոռցնել
կուտայ : Աս տեսակ բնաւորու-
թեանց հետ սպրիլը մարդուն հաճե-
լի է :

Հոս հաստատ աղբիւրէ կիմանան
որ Մարտականներու խմբագիր կեղ-
րունը իր ձագուկներով քաշուած է :
Ուրեմն միտքեան համար հիմա
ուրիշ բան չի մնար , բայց եթէ « վե-
րակազմակները » փութան « Երա-
կազմուելու » եւ փոխանակ գրչի շա-
ղակաբառութեամբ գիտնալու , զուտ
յեղափոխական կեղրոն մը կազմել
իրենց : Եւ որովհետեւ այսքան ան-
ցուղարձէ յետոյ վայրկեանական մի-
տքիւն կարելի չէ , գոնէ համբարձիս
գործունէութեան ծրագիր մը կը մը-
շակուի . ու երբ անգամ մը զուտ
յեղափոխականները իրարու մօտեան
չուտով կը վերնայ ամէն տեսակ
թիւրիմացութիւններ եւ ամբողջա-
կան միտքիւնը կիրազօրծուի :

Բայց որպէսզի այս համբարձիսու-
թիւնը չի վտանգուի եւ նոր դժուար-
ութիւններ չի ծագին , ազգային
մամուլն պարտականութիւնն է , գո-
նէ յեղափոխութեան կուսակցներուն ,
« Երազմու » « Կայրենիք » , « Ջան Ջա-
րենեաց » թերթերուն , որ այլ եւս
բնաւ կուսակցական վէճեր չի հանեն :

Անշուշտ պիտի գտնուին ուրիշ
վայրահաշ թերթեր որոնք ամէն մի-
ջոցներ պիտի թափեն միտքեան ա-
նունին տակ անկարելի դարձնելու
անոր յաջողութիւնը եւ պիտի գիտնեն
ամէն տեսակ կեղծաբոլորութեան եւ
խարժութեան բայց անոնք այլ կը
յաջողին այնչափ որչափ յաջողած են
մինչեւ հիմա իրենց այս օրինակ շա-
հատակութեանց մէջ :

Վէշ-ՄԱԺԱՆ

ՈՒԹՄՍՍԵԱՅ ՎԻՃԱԿԱՅՈՅՅ
ԳՈՐԾԱՆՈՒԹԵԱՆՑ ԱՂԲ. ԸՆԿ.
ՈՒՈՒՍՃՈՒԳ
1900 Հոկտ. 22 հեւ մինչ 32 Յունիս 1901

ՄՈՒՏԻՔ

Table with 2 columns: Description and Amount. Includes items like 'Փոխառութիւն զանա- զաններէ 110.40', 'Եւկան պտտցուած գանձանակէ (միտմեայ) 41.70', 'Տօնախմբութեանց առ- թիւ պտտցուած գանձա- նակէ 71.30'

Table with 2 columns: Description and Amount. Includes items like 'Եկեղեցւոյ մէջ պը- տրացուած պնակէ 272.90', 'Կերպմանատեղւոյ հա- մար նուէրներէ 90.—', 'Ամուսնութեանց առթիւ նուէրներէ 22.—', 'Պատահական նուէրնե- րէ 152.10', 'Մեռելակառքէ հասոյթ 222.50', 'Ծաղկեփունջէ 10.—', 'Պարահանդէսէ հասոյթ 245.—', 'Բաժնեգրիներէ " 410.—', Total: 1647.90

ԵԼՔ

Table with 2 columns: Description and Amount. Includes items like 'Փոխառութիւն վը- ճարուած 110.40', 'Աղխաց համար վճարուած 1. Դրամական օգնու- լթիւն 553.65', '2. Փայտ եւ ամուխ 282.50', '3. Ճանապարհածախք 115.10', 'Նորոգութեան ծախքեր 233.70', 'Դիւանական ծախքեր 9.05', 'Չանազան ծախքեր 50.10', 'Մեռելակառքի կառա- վարին 107.—', 'Վճարուած ի հաշիւ հին պարտքի Մ. Վարդանեանի 150.—', 'Պատրաստ դրամ 36.40', 'Ֆրանք 1647.00'

Ի Դիմաց Աղք. Ընկերութեն
Ատենադպիր Ատենապետ
Մ. Արզաւեան Ն. Գ. Բեսսակեան
Ծանօթ. — Մանրամասնութեանց
համար տեղեկութիւն առնել փափա-
քողք կը հրաւիրուին զիմել ընկե-
րութեան Կործագիր ժողովոյ զիւ-
նին :

Ա Չ Դ

Վտանայի Երկեսու Որբախնամ
ընկերութեան հաւաքիչ ըլլալ
փափաքողները կրնան զիմել
գործ . ժողովոյն :

Վարչ. Որբախնամի

XI

Լէվսքիի մէկ հատիկ լուսանկարը
որ միայն ձեռքերնիս անցած է , դժ-
բաղդաբայ շատ քիչ գաղափար կու-
տայ այսպիսի ուժեղ կամքի ու նկա-
րագրի տէր մարդու մը մասին : Կե-
ղարուեստը չէ կրցած ներկայացնել
անոր այն արտայայտիչ ղեկքը , որ
զինքը ողբերգով ու տախորով գաղա-
փարի վեհութենէն բոցալուսուած է :
Լէվսքիի միջնահասակ , նրբակազմ
եւ վայելչասես էր , ունէր գրեթէ
տոյր կապոյտ աչքեր , կլոր ու սպի-
տակ ղեկք մը , կարմրագոյն պիւսիք ,
հիւսնակ անգաղարու մտածութեանք ու
խոհուններէ , որ մտայծարծ ու քնա-
կան զուարթութեամբ մը կը կենդա-
նանար : Տարօրինակ բան . այս պա-
տանին ու ազատութեան , կուտի ու
մահու վտանգաւոր գաղափարը կը
թաքողէր , եւ ամէն օր վտանգի են-
թակայ էր , խաւարի , ամայութեան
ու արկածներու այս զաւակը , զուարթ
բնաւորութիւն մը ունէր :

Նա թօթի վոյժմտանի պէս գուսան
մըն էր , եւ իր ձայնէն առաջին ան-

դրուչի յօժար նուիրատուութիւն մը
եղաւ : Եստ անգամ կուտութեամբ կը
վերաբերուէր մէկն ալ չէր վաղաք-
չէր , որովհետեւ ոչ թէ վարդապե-
տութիւն մը՝ այլ պարտականու-
թիւն մը կը քարոզէր : Ուստան պա-
կասը կը լրացնէր իր համոզումնե-
րու յատկաբնութեամբ : Անգամ մը
գիւղացիներու կուտութեանն ու թե-
րահաւատութեանն զատնացած , զայ-
րացած բնաւ :

— Դուք անասեն մարդ պիտի ըլ-
լաք , երբ չորեքշաբթի եւ ուրբաթ
օրերը միս ուտելու սկսիք :

Թարգմ. Պ. ՍԻՐԷՄՃԵԱՆ

(Շարունակելի)

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

«Իսաչնակցական» Զուրիցերիա.— Զենք կրնար ինքզինքնին Իսաչնակցական կոչող անձանց թնեքու գրութիւնները հրատարակել: Զէ՞ք գիտեք որ յօդուածագիր մը պէտք է իր անունը տայ յօդուածը ուղղած թերթին: Մանաւանդ իբրեւ «Իսաչնակցական» ինչու «Նարժումէն» կը պահէք ձեր անունը, կեղծիքի մը յայտնումէն արդեօք վախնալով: Զեր այդ խուսափումով ամբողջ գրածնուդ անկեղծութիւնը արդէն կասկածի տակ գրած կըլլաք:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Վառնայի «Ժողովրդային Միութիւն» անուն հաստատութեան մը կողմէ համայն ազգայիններու ուղղեալ Հրատէր մը ստացած ենք, ուր յիշեալ հաստատութեան վարչութիւնը քանի մը էջերու մէջ, կը պարզէ մեր ազգին արդի նիւթական ու բարոյական վիճակը և ինքզինքին պաշտօն կուտայ միութեան հրատէր կարգալու ամբողջ հայութեան: Վարչութիւնը կը յայտարարէ թէ՛ իր նպատակին մէջ յեղափոխութեան վրանելու ամենափոքր մը տագրութիւն մը անգամ չի կայ, թէ զանազան քաղաքներու մէջ առժամեայի հանգամանքով մարմիններ կազմուած են, որոնք նիւթական ու բարոյական ուժ պիտի գոյացնեն, և այդ բոլոր մարմինները այն ատեն միայն պիտի դադարեն, «երբ յեղափոխ միացեալ մարմին մը կամ ընդհանրութեան վատհուծիւն ներշնչող յեղափոխ կազմակերպութիւն մը յառաջ գայ ու գործնականապէս իր գործունէութիւնը ցոյց տայ»: Պատգամաորներու ժողովին իրատեսութեան կը պատկանի կղեր յեղ. կուսակցութեանց միութեան աշխատիլ:

Յիշեալ հաստատութեան մասին ո և է կարծիք յայտնելէ առաջ, առ այժմ մէկ քանի դիտողութիւններ ընելով կը բաւականանք: Նախ որ, եթէ կուսակցութեանց միութեան աշխատելը իրենց ապագայ պատգամաորական ժողովին գործն է: ուրեմն այդ «առժամեայ մարմինները» ինչերու միութեան պիտի աշխատին: Յետոյ, վարչութիւնը կը խոստովանի թէ հիմակուան յեղ. կազմակերպութիւնները վստահելի չեն, քանի որ կը պատէ «վստահութիւն ներշնչող կազմակերպութեան մը առաջ գալուն»: Արդ՝ վրան վստահութիւն չունեցած կազմակերպութեանց միութեան է որ պիտի աշխատին, ինք և իր առժամեայ

մարմինները: Զէ՛ որ անոնց միացումով ալ աւելի անվստահելի կազմակերպութիւն մը պիտի ունենաք: Ասկէ վատ, ի՞նչ իրաւունքով ժողովրդին կողմէ անվստահելի կը կոչէ այն կազմակերպութիւնները, որոնք ժողովրդեան մէջ իրենց բազմութիւն յարդներն ունին, այնքան բազմութիւն սրբան թերեւ չեն միութիւն պրոպագանդները: Եթէ վարչութիւնը կը խորհի եղածներն քայքայել ու նոր կազմակերպութիւն մը ստեղծել, առ այլ առայժմ ցնորք է, և այն ատեն, թող չըսէ թէ կուսակցութիւն կազմուելու նպատակունի: Միութիւնը այդ տեսակ կասկածելի յայտարարութիւններով չէ որ կրնայ իրագործուիլ, որոնք միութեան անունին տակ երկիւղեղով սերմեր կը պարունակեն:

— Սեփաստիոյ Որբանոցին տարեկան մրցանակաբաշխութեան հանդէսին առթիւ, որբանոցին տնօրէնը իր տեղեկագրով պարզեր է որբանոցին վիճակը. 91 որբեր արհեստի կամ ուսմանց պանազան ճիւղերուն մէջ մրցանակի արժանացեր են:

— Պուլկարիոյ Այցելու Հովիւ Պաղճեան վարդապետ իր պաշտօնին գծուարութիւնները պարզելով Պատրիարքարան զրկած է իր հրատարականը և Պօլիս վերստացանալու համար կը սպասէ Պատրիարքարանի հրահանգին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Դիւանագիտական շրջանակներու մէջ լուր կը պտտտի թէ՛ Պալքանեան երկիրներու և մասնաւորապէս՝ Մակեդոնիոյ մէջ տիրող խռովութեանց պատճառաւ, ուստի կառավարութիւնը մտադիր է առաջարկել մեծ պետութեանց թուրքիոյ քրիստոնեայ նահանգներու մէջ բարենորոգումներ մտցնել և Սուլթանէն պահանջել համաձայնութեամբ անոնց գործադրութիւնը, փոխաբէն թուրք կառավարութեան էրաշխատութիւններ առնելով:

— Սերպիոյ դեսպանը Բ. Դրան ծանուցագիր մը մատուցեր է Սերպ սուրհանդակին միջադէպին առթիւ, յայտարարելով որ եթէ տակաւին պայուսակները արդիւրին իրենց հասցէին չըրկուելու, Սերպ կառավարութիւնը պիտի ստիպուի ճնշողական միջոցներու դիմել:

— Դեսպանները ժողով գումարեր են Բ. Դրան ծանուցագիր մը յանձնելու համար, Պօլսոյ քաղաքապետութեան ցոյց տուած անհոգութեան մասին, քաղաքի ներկայ առողջապահական պայմաններուն մէջ:

— Սուլիս 13ին երեք նոր ժանտախտի դէպք պատահեր են,

որոնց մին մահացու, ընդամենը 10 դէպք եղած է և երկու մահ: Սուլթանը առանց ժողովին խորհուրդ հարցնելու ուզեր է 10 օրուան բարձրացնել Եգիպտոսէ եկողներուն դէմ տրուած քարանդէինան: Ասոր վրայ ժողովը որոշեր է դեսպաններուն դիմել:

— Սուլթանին իրատէն Եգիպտոսի քարանդէինայի մասին, քաղաքական նկատումներէ ծնունդ առած է: Սուլթանը նոր դատարութիւն մը գտած ըլլալ կը կարծէ և Շէրիֆ փաշայի մէջ ձերբակալել տուած է 20 ի չափ մարդիկ, որոնց շատը Եգիպտոսցիներ են կամ անոնց հետ յարաբերութիւն ունեցողներ:

— Սուլթանը նմանապէս ոչնչացուցեր է իրատէնով մը, միջազգային առողջ. վարչութեան սահմանած 48 ժամուան քարանդէինան Պօլսէն թուրքիոյ այլ և այլ կողմերը մեկնող ճամբորդներուն համար:

Պ Ո Ւ Կ Ա Ր Ի Ա

Նախկին Մակ. քօմիթէին դէմ Պուրէշի սպաննութեանց մասին եղած ամբաստանութիւնները. Սօֆիայի գատատանական յանձնախումբը հետեւեալ կերպով պարզած է:

Պօլս Սարաֆօֆ և Սթօյանօֆ կամբաստանուին իբր մեղակից Պուրէշի մէջ կատարուած Քիրիլ Ֆիթօլսի սպաննութեան: Վատարակ Քօվաչէֆ և Տիմիթր Քրօլէֆ իբր մեղակից Պուրէշի մէջ կատարուած Բրօֆ. Միխայիլանուի սպաննութեան, որ «Փէնէնսիլ Պալքանիք» թերթը կը հանէր:

Հարցաքննութիւններէն յայտնի եղեր է որ, Մակ. քօմիթէն իմանալով Ֆիթօլսի լրտեսի գեր կատարելը պուլկար գաղութին մէջ, երկու մարդ Ռուսչուք զրկեր է, Միթօֆ և Սթօյաչէվ, ուր Սարաֆօֆ և Սթօյանօֆ անոնց անցագրեր հայթայթեր են Պուրէշի համար, հոն Ֆիթօլսիին Պուլկարիա բերելու զուր ջանքերէ ետքը, սպաններ են:

Իսկ Միխայիլանուի սպաննութիւնը կատարուեր է Տիմիթրօֆի ձեռքով, որ նախ Ռուսչուքի շըրհանկիրներու պետ, Տիմիթր Քրօլէվէն հրահանգ ուղեր է, և յետոյ Մակ. քօմիթէին դիմեր է, ուրկէ քաջալերութիւն և դրամական նպաստ գտեր է. հարցաքննութիւնը ստուգեր է որ այս վերջին սպաննութեան գլխաւոր թելադրիչներն ալ թրօլէվ ու Քօվաչէվ են:

— Նոր փոխառութիւնը, որուն բանակցութիւնները Բարիկի մէջ կը կատարուին, 100 միլիոն ֆրնք. գումարի մը համար է, 0/0 5 տոկոսով: կառավարութիւնը ծխախոտի մենաշնորհը պիտի տայ

իբր երաշխաւորութիւն: Փոխատու գրամատէրերը քօմիթու մը պիտի հաստատեն Սօֆիայի ծխախոտներու վարչութեան վերայ: Երբ բանակցութիւնները վերջանան, փոխառութիւնը Սօպրանիէի հաւանութեան պիտի ենթարկուի:

— Սեւ ծովու Ռուսական նատատորմիղը մինչեւ ամսոյս 27 անպայման Վառնայ պիտի հասնի: Այդ թուականը Ռուսաց վերջին պատերազմի ատեն Վառնա մտնելուն օրը ըլլալով. ուստի զօրքերը ներկայ պիտի գտնուին քաղաքիս մէջ կատարուելիք զինուորական հանդէսներուն: Նաւատորմիղը պիտի բազկանայ 5-6 մեծ զրահաորներէ, 10 15 յաւաւորակներէ և նոյնքան ալ փոքրիկ մարտահաւերէ:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Մոնկոլիայի նոր միսիօնար Պիրմին որ թուան իշխանի գաւառներուն մէջ կը գտնուի, կը յայտնէ թէ 2000 քրիստոնեաներ աւնօթութեան մեռնելու վիճակին մէջ են: Պիրմին Բէքիի ֆրանսական դեսպանէն զօրք. զէնք ու պաշար պահանջեր է:

Մ Ա Կ Ե Դ Ո Ւ Ն Ա

Պօլսոյ վճարեկ ատեանը անցեալ չորեքշաբթի հաստատեր է Սէլանիկի գատարանին վճիռը Մակեդոնացի խռովարարներու դէմ, որոնք են Տօքթ. Թաթարճիէֆ, Իսթիմա քահանան ևն:

Տեղական իշխանութիւնները իսկոյն որոշեր են դատապարտեալները աւուր տեղեր արտօրել: 30 հոգիի չափ ուրբաթ օր, Հաճի Տաուտ շոգենաւով Քիոս զրկուեր են: Բազմաթիւ զօրքեր, խուռներամ ամբոխի մը ընկերակցութեամբ գատապարտեալները առաջնորդուեր են դէպի նաւամատոյց, ուրկէ մեկնած առնենին Պուլկարիական ազգային երգը հնչեցուցեր են բոլոր գատապարտեալները միասին:

ԽՄԱԿԳՐՈՒԹԻՒՆ. «ՇԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատման, հասցէտման, նամակագրուի, հարսանեկան հրատարակիչ, մահազգ:

Գիները յոյժ դիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՉՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՒԻ

ОТОВОРНИКЪ:
Мурадъ-Ераносянъ
Печ. Взаимность — Варна